ՏԱԹԵՎԻ, Ս. ԹԱԴԵԻ ԵՎ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ ԺԹ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Կոստիկյան Քրիստինե
ՀՀ ԳԱԱ ԱԻ, Մաշտոցի անվ. Մատենադարան,
ԵՊՀ, Հայ-Ռուսական Համալսարան
DOI: 10.56549/29537819-2023.4-220

Բանալի բառեր. *Ղաջարական պետություն, Տաթևի վանք, Ս. Թադեի վանք, Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանք, Աբբաս Միրզա, ռուս-պարսկական պատերազմ, կալվածք*

Ղաջարական պետության կազմավորման սկզբից սրվում են ռուս-իրանական հարաբերությունները և նրանց միջև հակամարտությունը նոր փուլ է մտնում՝ կապված Ռուսաստանի Այսրկովկաս ներթափանցման քաղաքականության ակտիվացման և իրանական պետականության ամրապնդման ու նախկինում նրան պատկանող տարածքների վերանվաճման ուղղությամբ ձեռնարկած քայլերի հետ:

Այսրկովկասի ժողովուրդները և նրանց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները դառնում են հակամարտ կողմերի ակտիվ շահարկումների թիրախը, իսկ ԺԹ դարի սկզբից մինչև 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը տարածաշրջանը վեր է ածվում նրանց միջև ընթացող պատերազմական գործողությունների թատերաբեմի:

Այսրկովկասի համար քաղաքական այս փոթորկահույզ շրջանում տեղի հայոց վանքերը ևս իրենց վրա կրում են ծանր հարվածներ՝ տուժելով ինչպես ռազմական գործողություններից, այնպես էլ քաղաքական վայրիվերումներից և էթնիկ տեղաշարժերից:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ զգալի տեղ են զբաղեցնում Սյունիքի և Ատրպատականի վանքերի (Տաթևի, Արտազի (Մակու) Ս. Թադեի և Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանք) արխիվային հավաքածուների նմուշները, որոնց տվյալները համադրելով ժամանակաշրջանի այլ սկզբնաղբյուրների տեղեկությունների հետ հնարավոր են դարձնում նրանց տնտեսական դրության և ծագած զանազան խնդիրների, դաջարական իշխանությունների կողմից նրանց նկատմամբ վարած քաղաքականության ուսումնասիրությունը:

Տաթևի վանքը

Ղևոնդ Ալիշանը նկարագրելով Տաթևի վանքը ԺԸ դարի վերջին՝ նշում է, որ թեպետև նրա եպիսկոպոսներ Աբրահամը, Հովակիմն ու Մարտիրոսը բավականին նորոգեցին վանքը, սակայն այն «յոյժ անշքացեալ էր»[1]: Տաթևի վանքը առաջին ռուս-պարսկական պատերազմի տարիներին (1804 - 1813) հայտնվում է պատերազմական գործողությունների հորձանուտում: Ղարաբաղի խանությունը 1805 թ. ռուսական իշխանությունների և Ղարաբաղի Իբրահիմ խանի միջև կնքված պայմանագրով անցել էր Ռուսաստանի տիրապետության տակ և Սյունիքի որոշ շրջաններ, որոնք նախապես միացվել էին այդ խանությանը[2], ևս համարվում էին միացված Ռուսաստանին: Իրանի Ղաջարական իշխանությունները իրենց հերթին համարելով Մեղրիի և Սիսիանի շրջանները, որոնց մեջ էր մտնում Տաթևը, ստրատեգիապես կարևոր շրջաններ, «Ղարադաղի և Թավրիզի բանալին»՝ պայքարում էին դրանց համար[3]: Ուստի տարօրինակ չեն նրանց քայլերը, որոնք միտված էին տեղի քոչվոր մահմեդականներին ներգրավելու պա-

---

[1] **Ալիշան** 1893, էջ 242:

[2] Այդ մասին տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով** 2000, էջ 53:

[3] Այդ միտքն է արտահայտել 1810 թ. Մեղրին պաշտպանող ռուսական զորքի տաղանդավոր հրամանատար գնդապետ Պյոտր Կոտլյարևսկին (**АКАК** 1870, վավ. 840, էջ 561-2), որը խիստ կարևորում էր Սյունիքի հատկապես այդ շրջանի գտնվելը Ռուսաստանի տիրապետության ներքո:

տերազմի մեջ և ռազմական գործողությունների միջոցով դրանք նվաճելու: Ռուսական հրամանատարության զեկուցագրերի բովանդակությունից հայտնի է դառնում, որ 1810 -1813 թթ. Տաթեւում տեղակայվել էին ռուսական ջոկատներ, որոնք Գորիսում և Խնձորեսկում գտնվող զորագնդերի հետ չպետք է թույլ տային պարսկական զորքերի հարձակումը Շուշիի վրա Նախիջևանի տարածքից[4]:

1813 թ. կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրի թերի կողմերից էին սահմանների վերաբերյալ ոչ հստակ ու վիճահարույց ձևակերպումները, որոնք հետագայում կողմերի միջև երկարատև վիճաբանությունների պատճառ են դառնում և այդպես էլ լուծում չստանալով՝ ձգվում մինչև նոր պատերազմի բռնկումը: Վիճաբանության առարկա էին նաև Սյունիքի որոշ շրջաններ:

Սահմանը Իրանի ու Ռուսաստանի միջև սկսվելով արևմուտքում Շորագյալի շրջանից՝ ձգվում էր նրան կից Փամբակի, Ղազախի, Շամշադիլի և Ելիսավետպոլի շրջաններով, այնուհետև Ղարաբաղի խանության սահմանով հասնում էր Արաքս գետին[5]: Այսպիսով, Ռուսաստանին էր անցել Սյունիքի Կապան-չայ և Կապանակ-չայ գետերի միջև ընկած տարածքը[6], որի նկատմամբ հավակնություններ ուներ Իրանը:

Ղարաբաղի Իբրահիմ խանի որդիներից Աբուլ Ֆաթհ խանը դեռևս Ֆաթհալի շահի պաշտոնավարման սկզբում պատանդ էր տրվել նրան և գտնվում էր Իրանում[7]: 1806 թ. Իբրահիմ խանի սպանությունից հետո նրա որդիներից Մեհդի Ղուլին դառնում է այնտեղի խանը: Նույն շրջանում Իրանի կողմից Ղարաղաղի և Սյունիքի շրջանների կառավարիչ էր նշանակվել Աբուլ Ֆաթհը: Ուստի պատահական չեն Տաթևի վանահոր դիմումները վերջի-

---

[4] **АКАК** 1870, էջ 558, 559, **АКАК** 1873, էջ 454, 582:
[5] **АКАК** 1875, էջ 141:
[6] **АКАК** 1875**,** էջ 228.
[7] **Միրզա Յուսուֆ Ներսեսով** 2000, 242:

նիս և իրանական իշխանություններին՝ իրեն պատկանող կալվածքներից հարկերի և նրա թեմի մեջ մտնող գյուղերից եկեղեցական հասույթները հավաքելու հարցում աջակցության խընդրանքով[8]: Այդ առթիվ է 1820 թ. հրապարակվել Աբբաս Միրզայի երկու հրամանագրերը վանքի իրավունքների հաստատման և նրա սպասավորների ազատ երթևեկությունը ապահովելու կարգադրությամբ[9]: Մատենադարանի մեկ այլ փաստաթղթի՝ Աբբաս Միրզայի 1824 թ. հրամանագրի բովանդակությունից հայտնի է դառնում, որ վանքի առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսը հանդես է եկել որպես Ներսես արքեպիսկոպոսի բանագնացը և թագաժառանգին հասցրել նրա երկու խնդրագրերը, ստացել նրա հրովարտակը, նաև որոշ բանավոր հրահանգներ, որոնք պետք է փոխանցեր Ներսեսին արքեպիսկոպոսին և Եփրեմ կաթողիկոսին[10]:

Ս. Թադեի վանքը

Ներկայիս Իրանի տարածքում գտնվող Մակվի Ս. Թադեի վանքը հայկական նշանավոր վանքերից ու ուխտատեղիներից է: Ղաջար իշխանության սկզբից այն ծանր կացության մեջ էր, քանի որ մեծապես տուժել էր 1795 թ. Ատրպատական մտած Իրանի իշխող դինաստիայի հիմնադիր Աղա Մուհամմադ խան Ղաջարի զորքերից, որոնք ավերել և թալանել էին այն: Վանքի բարեկարգմանն ու տընտեսական վիճակի բարելավմանն ուղղված իր ջանքերով աչքի է ընկնում 1810թ. նրա առաջնորդը դարձած Սիմեոն եպիսկոպոսը[11]: Մակվի հայոց վանքի պատմությանը վերաբերող Մատենադարանի պարսկերեն վավերագրերից 7-ը թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրերն են՝ հրապարակված 1808 - 1824թթ. վանքի վերանորոգմանը նյութական աջակցություն

[8] ՄՄ, կ/դ, թղթ. 2բ, վավ. 129
[9] **Կոստիկյան** 2021, վավ. 65, 66:
[10] **Կոստիկյան** 2021, էջ 143, 145:
[11] **Ոսկեան** 1942**,** էջ 496:

ցուցաբերելու ու Ղարաթուլքի[12] գյուղի հարկերի նկատմամբ վանքի իրավունքները հաստատելու մասին[13], որոնք մատնանշում են նրա ջանքերը հայոց վանքի բարեկարգման ուղղությամբ: Ուշագրավ է Աբբաս Միրզայի 1808թ. հրամանագիրը, որով Ս. Թադեի վանքի Սիմեոն վանահորը հրահանգվում է հավաքել Ղարաքիլիսա գյուղի ցրված հայ բնակիչներին և հուսադրել իր՝ նրանց հանդեպ ունեցած բարեհաճությամբ[14]:

Ղարաթուլքի գյուղից հարկազանձումներ անելու իրավունքը Ս. Թադեի վանքին է շնորհվում 1814 թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանագրով, որը վերահաստատվում է նրա 1815 և 1820 թթ.[15], նաև հետագայում՝ 1853-1854 թթ. վանքի առաջնորդ Սահակ Սաղունյանի ջանքերով Մակվի շրջանը կառավարող Ֆիրուզ Միրզա Ղաջարից ձեռք բերված հրովարտակներով[16]:

XIX դարի առաջին կեսում Սիմեոն արքեպիսկոպոսի առաջնորդության տարիներին Ս. Թադեի վանքը վերանորոգվում է և դառնում Ատրպատականի Հայոց առաջնորդարանը[17]: Ամենայն հավանականությամբ թագաժառանգ Աբբաս Միրզան մտադիր էր Ատրպատականում ստեղծել նոր հոգևոր կենտրոն հայության համար ի հակադրություն Էջմիածնի: Վերանորոգման ընթացքում, որին նա օժանդակում էր, վանքի կենտրոնական ու արևմտյան պատերի սև քարերը փոխարինվում են սպիտակով, նաև վանքի գլխավոր մուտքի վերևում պարսկերեն նասթա'լիղ գրով արձանագրություն է փորագրվում թագաժառանգի ցուցա-

---

[12] Այն ներկայիս Իրանական Ադրբեջանի Մակվի Սիահչեշմե շահրեստանի Բաբաջիքի շրջանի շիա թյուրքական բնակավայրերից է (Farhang-e jughrafya-ye Iran, 1330, էջ 360):

[13] ՄՄ, կ/դ., թղթ. 4, վավ. 135-141, 143:

[14] Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարան, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 3945տ:

[15] **Կոստիկյան** 2021, վավ. 48, 52, 62:

[16] ՄՄ, կ/դ, թղթ. 4, վավ. 148, 149:

[17] **Ֆրանգեան** 1905, էջ 30:

բերած օգնության մասին[18]: Մակվի Հուսեյն խանի նյութական օժանդակությամբ 1819 թ. կառուցվում է վանքի շրջապարիսպը, որի մասին նշված է պարսպին ագուցված արձանագիր քարի հայերեն արձանագրության մեջ[19]:

Աբաս Միրզայի 1824 թ. հրամանագրով Ս. Թադեի վանքի Սիմեոն եպիսկոպոսի հիվանդության պատճառով վանքում ծագած խռովությունները հարթելու նպատակով Եսայի քահանան նրան օգնական է նշանակվում, նաև հանձնարարվում է Աղալար Բեկին աջակցել նրանց[20]: Այնուամենայնիվ, վանքի վերանորոգումը ավարտին չի հասցվում 1828 թ. Սիմեոնի այնտեղից տեղափոխման և Ագուլիսի Ս. Թովմա Առաքյալի առաջնորդ նշանակվելու պատճառով:

Իրանի Ատրպատական նահանգի հյուսիսում Արաքս գետի հարավային կողմում է գտնվում հայոց հնագույն վանքերից մեկը՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը, որը հայտնի է նաև Մաղարդա վանք, Դարաշամբի վանք և պարսկական աղբյուրներում նշվող Ս. Դանիելի վանք անուններով[21]: Մատենադարանի պարսկերեն վավերագրերից 50-ից ավելին վերաբերում են Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի պատմությանը, որոնցից շուրջ 20-ը հրապարակվել են Ղաջարական ժամանակաշրջանում:

1820 - 40 թթ. Ս. Ստեփաննոսի վանահայրն էր Սարգիս Դավթյանը[22]: Ինչպես հայտնի է դառնում Մատենադարանի որոշ պարսկերեն հրամանագրերի բովանդակությունից, Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը, ելնե-

---

[18] Տե՛ս այդ արձանագրությունը հրատարակված՝ **Հախնազարյան** 2012, էջ 169:

[19] **Հախնազարյան** 2012, էջ 171:

[20] ՄՄ, կ/դ, թ. 4, 143:

[21] Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի պարսկական աղբյուրներում հանդես է գալիս որպես Դանիել մարգարեի վանք: Այդ անվան ծագման հնարավոր տարբերակի մասին տե՛ս **Կոստիկյան** 2017, 126:

[22] **Ոսկեան** 1942, էջ 564:

լով ժամանակի պահանջներից ու իր վանքի շահերից, համագործակցում էր իրանական իշխանությունների հետ՝ տեղեկություններ հաղորդելով ռուս-պարսկական 1826 - 1828թթ. պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գործողությունների մասին[23]: Իրանական կողմը բարձր գնահատելով Մաղարդա վանքի վանահոր ծառայություններն ու նվիրվածությունը Իրանին՝ պաշտպանում էր վանքի շահերն ամեն տեսակի ոտնձգություններից ու օժանդակում վանքի բարօրությանը:

Ատրպատականի հայոց վանքերի վիճակը խիստ վատթարանում է 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո իրանահայության դեպի Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայկական շրջաններ կազմակերպված ներգաղթի հետևանքով: Շուրջ 45 հազար հայ հեռանում է Իրանի հիմնականում Ատրպատականի նահանգից: Արդյունքում այնտեղի հայոց վանքերը զրկվում են իրենց թեմական բնակիչներից ու համայնքներից՝ կանգնելով կործանման եզրին:

Հայերի արտագաղթը Ատրպատականի կառավարիչ և թագաժառանգ Աբբաս Միրզայի համար ծանր հարված էր, ինչպես այդ գաղթը նկարագրող Սերգեյ Գլինկան է նշում՝ «Թագաժառանգը կարծում էր, թե կարտագաղթի միայն մի փոքր խումբ, սակայն հայերի համատարած արտագաղթը նրա համար սարսափելի, ասես ամպրոպի հարված լիներ»[24]:

Իրանահայության արտագաղթին խոչընդոտելու նպատակով արգելվում է նրանց ունեցվածքը և անշարժ գույքը գնելը[25], որն իր հերթին բավական ծանր անդրադարձ ունեցավ հայերի վրա, այնուամենայնիվ այդ միջոցը չկանգնեցրեց հայերի համատարած և զանգվածային ներգաղթը Ռուսաստանի

---

[23] ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 750, 751, 752:
[24] **Глинка** 1831, էջ 48:
[25] **Глинка** 1831, էջ 52-53:

տիրապետության տակ անցած Նախիջևանի, Երևանի և Ղարաբաղի տարածքները:

Իրենց մեծաթիվ համայնքներից զրկված և կարծես որբացած հայոց վանքերի հետագա ճակատագրի համար շատ կարևոր էր ղաջարական իշխանությունների այն հոգածությունը, որը արտացոլվել է նրանց արձակած հրամանագրերում:

Մասնավորապես, Աբբաս Միրզան հատուկ հոգածություն է հանդես բերում Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի նկատմամբ: 1829 թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի և նրա որդի Բահրամ Միրզայի (որը Խոյի կառավարիչն էր 1828-9 թթ.)[26] հրամանագրով Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին որպես *թիուլ* հատկացվում է Դարաշամբ գյուղը[27], որն դառնում է նաև վանքի *վակֆային* կալվածքը: Այս իրողությունը արձանագրված է նաև Նախավկայի վանքի արևմտյան դռան վրայի պարսկերեն արձանագրության մեջ[28]:

Գյուղի ձևակերպումը որպես վակֆային կալվածք բարդ իրավական գործարք էր, որը կարող էր կատարվել կալվածքի գնումից հետո: Այս գործընթացի մաս են կազմել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվի պարսկերեն երեք փաստաթղթերը, որ վերաբերում են Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին: Դրանք կալվածագրեր են, որոնցով 1829 թ. մաս-մաս գնվել է Դարաշամբ գյուղը[29]: Ինչպես նշվում է Մաղարդավանքի գլխավոր եկեղեցու շքամուտքի կամարակապ ճակատակալ քարի պարսկերեն արձանագրության մեջ, այդ գյուղի գնման համար վճարվել է ընդամենը 300 թուման, որից հետո այն ձևակերպվել է նաև որպես վանքապատկան վակֆ[30]:

---

[26] **Nava'i** 1988 **.**

[27] **Կոստիկյան 2021**, վավ. 94, 95, ՄՄ, կ/դ, թղթ. 1ե, վավ. 754:

[28] Այս արձանագրությունը տե՛ս հրատարակված՝ **Հախնազարյան** 2012, էջ 308:

[29] Տե՛ս Մայր Աթոռ Ս. Էջմիածին, արխիվ, վավերագրեր 396, 397:

[30] **Հախնազարյան** 2012, էջ 308:

Հետագայում և՛ այս գյուղի պատկանելությունը վանքին հաստատվել է թե՛ տեղական իշխանությունների և թե՛ Ղաջար Նասրեդդին շահի հրամանագրերով[31]: Ինչպես փաստում են նաև հայկական աղբյուրները, Դարաշամբ գյուղն այնուհետև, ողջ XIX դարի ընթացքում, շարունակում էր պատկանել վանքին[32]: XIX դարի մի շարք հրովարտակներ արգելում են հարևան քոչվոր ցեղերին ու այլ մահմեդականներին (վարմազիարցիներ) ոտնձգություններ կատարել Դարաշամբի վանքի կալվածքների ու նրա եկամուտների նկատմամբ[33]:

Հարկ է նշել, որ այսօր էլ Ատրպատականի հայոց վանքերը բավականին բարվոք վիճակում են, և թեև զրկված են իրենց պատկանող նախկին կալվածքներից ու թեմապատկան հայ բնակիչներից, այնուամենայնիվ մշտապես գտնվել են իրանական իշխանությունների ուշադրության ներքո և Ս. Թադեի ու Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքերը անգամ վերջերս նորոգվել են Յունեսկոյի հովանու ներքո, իսկ հայ ուխտագնացները և զբոսաշրջիկները ազատ կարող են այցելել:

Կից ներկայացնում ենք Հայաստանի Ազգային արխիվում պահվող (Ազգային Արխիվ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 285) Նասրեդդին շահ Ղաջարի 1848 թ. հրովարտակը Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի Սարգիս եպիսկոպոսին: Հրովարտակը հրապարակվել է նախքան Նասրեդդին Ղաջարի գահակալումը, որը տեղի է ունեցել 1848 հոկտեմբերի 22-ին[34], այս պատճառով նա իր կնքադրոշմում նշված է որպես թագաժառանգ:

---

[31] ՄՄ, Կ/դ, թղթ. 1ե, վավ. 762, 678, 776, 792, 794բ, 797; ՀՀ Ազգային Արխիվ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 285:

[32] **Ֆրանգեան** 1905, էջ 9:

[33] ՄՄ, Կ/դ, թղթ. 1ե, վավ. 753, 763, 775, 776:

[34] Ըստ Ռեզակուլի խան Հեդայաթի Նասրեդդին շահի պաշտոնական թագադրությունը տեղի է ունեցել հիջրայի 1264 թ. զի ղաադե ամսի 22-ին (Riżāqulī Khān Hidāyat 1339, 262):

1. [مهر]: ولیعهد شاه جهان ناصرالدین / حکم والا شد آنکه قریه دیب کند و دره شام را سرکیس خلیفه متولی اوجاق جناب دانیال نبی علیه السلام از قرار قباله معتبره شرعیه خریده وقف مصارف و مراتب آن بقعه متبرکه
2. نموده بود نواب مستطاب غفران مآب نایب السلطنه مبرور اسکنه الله تعالی فی دارالسرور نیز مالیات دیوانی آنها را از قرار رقم مطاع لازم الاتباع که بملاحظه نظر مبارک والا رسید بتیول واگذارو مقرر فرموده اند
3. و تا خلیفه مشارالیه حیات داشت بهره مالکانه و مالیات دیوانی آنجا را که متعلق و مخصوص باوجاق بلند رواق است او خودش بازیافت داشته بمصارف لازمه میرسانده است بعد از وفات او که امر متولی گری اوجاق
4. بالوازم و مراسمی که دارد بر حسب توکیل و تفویض مذهبی بعالیشأن زبدة المسیحین اوانس خلیفه منتقل شده است امر وقفیت و تیولی قریهٔ مزبورتین هم باو انتقال یافته است و چند سال میشود که بآداب مراسم این شغل اشتغال دارد
5. از قراریکه بعرض اشرف والا رسید عالیشأن محمد حسین بیک ورمزیار بمناسبت زراعت و فلاحتی که در ملک آنجا باجازه متولی اوجاق دارد و آغل گوسفند برای گذران او داده بوده اند حالا اخلال و افساد در امر وقف و تیول اوجاق
6. مینماید و بخلاف مصلحت حرکت میکند و همچنین عالیجاه حسین علی خان کنگرلو پسر مرحوم زمان خان ادعای ملکیت در آغل آنجا دارد و حال آنکه از قرار حدود قباله شرعیه مزبوره همان محل ادعای عالیجاه مشارالیه داخل ملک قریتین مزبورتین است
7. لهذا امر و مقرر میفرماییم که عالیجاه رفیع جایگاه مجدت و نجدت همراه فخامت و مناعت آگاه مقرب الخاقان محمد طاهر خان وکیل حاکم خوی قدغن اکید نماید که اولا" تیول انجا کما فی السابق مجری و ممضی باشد
8. ثانیا" محمد حسین بیک مزبور بی اذن و اجازه خلیفه اوانس بمزرع و آغل که باو داده بوده اند مدخلیت نکنند مگر اینکه خلیفه خودش که متولی ملک است باز اجازه بدهد و الا مورد مواخذه خواهد شد ثالثا" عالیجاه حسنعلی خان
9. که خارج از حدود قباله حرف میزند و تعدی میکند بهیچوجه مزاحم و متعرض خلیفه نباشد تا متولی و خدام اوجاق را فراغت حاصل بوده بمراسم دعاگویی برای بقای دولت قاهره مشغول باشد حسب المقرر مرتب دارد و در عهده شناسد. فی شهر جمیدی الاولی سنه 1264.

[در جاشیه بالای]: صحیح است

[Կնիք]. Աշխարհի շահի թագաժառանգ Նասրեդդին

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին. Դիբքենդ և Դարաշամբ գյուղերը Դանիել մարգարեի, թող խաղաղություն իջնի նրա հոգուն, սրբավայրի (օջախ) մութավալլի[35] Սարգիս խալիֆան[36] շարիաթական[37] օրինական կալվածագրով գնելով՝ վակֆ[38] է արել օրհնյալ սրբավայրի ծախսերի ու կարիքների համար: Հանգուցյալ իշխանության փոխանորդ, Բարձր Ալլահի կամքով դրախտաբնակ բարեպաշտ [Աբբաս Միրզան] նրա դիվանի[39] մալիյաթը[40] հպատակեցնող հրամանագրով (ռաղամ), որը բարձր օրհնյալ զննությանն արժանացավ, որպես թիուլ[41] է հատկացրել:

---

[35] Մութավալլի (متولى) - Խնամակալ, տնօրեն: Այսպես էին կոչվում հատկապես մզկիթների կամ վանքերի առաջնորդները: Այդ պաշտոնում գտնվելու ընթացքում, տվյալ կրոնական հաստատությանը պատկանող բոլոր կալվածների և այլ ստացվածքների իրավասությունը և նրանցից ստացվող եկամուտների տնօրինության իրավունքը ամբողջապես վերապահված էր նրանց (**Փափազյան** 1959, էջ 224):

[36] Տիտղոս, որ պարսկական գրագրության մեջ տրվում էր հայոց կաթողիկոսներին, եպիսկոպոսներին ու այլ բարձրաստիճան հոգևորականներին:

[37] Շարի՛աթ (شريعت) - Մուսուլմանական կրոնական օրենքներ հաստատված նորմեր, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների բարձրագույն կրոնական - դատական ատյանը:

[38] Վակֆ (وقف) - Բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին նվիրված, վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, նվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և որպես այդպիսիք ազատվում էին պետական հարկերից (**Փափազյան** 1956, էջ 120) :

[39] Դիվան (ديوان) - Պետական գործերի ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով:

[40] Մալիե, մալիյաթ (مالیات، مالیه) - XV դարից և ավելի վաղ ժամանակներից գոյություն ունեցող գլխավոր եկամտահարկի «մալի» տարբերակներից, որ ավելի գործածական դարձավ XVIII դարում և փոխարինում էր «մալին» կամ «մալոջհաթին» (**Փափազյան** 1959, էջ 222):

[41] Թիուլ (تيول) - XVI - XVII դարերում ֆեոդալական պարգևական հողատիրության տարածված ձևերից մեկը: Պետական և զինվորական ծառայության դիմաց թիուլներ էին տրվում ինչպես ամբողջական գյուղեր - (եթե դրանք պետական՝ «դիվանի» գյուղեր էին), այնպես նաև առանձին մուլքային գյուղերից և այլ հարկատու օբյեկտներից ստացվող պետական հարկերը կամ նրանց մի մասը: Նույն իմաստով թիուլը շարունակում էր կիրառվել նաև Ղաջարական դարա-

Քանի դեռ հիշյալ խալիֆան ողջ էր, փառապանծ սրբավայրին պատկանող ու [նրան] հատկացված մալիքանեն[42] ու դիվանի մալիյաթը ինքն էր ծախսում [վանքի] կարիքների վրա, նրա մահից հետո, երբ մութավալլիի գործը իր պարտականություններով ու կարգով հանձնվեց պատվարժան քրիստոնյաներից լավագույն Օվանես խալիֆային[43], հիշյալ գյուղերի վակֆի ու թիուլի գործերը ևս նրան փոխանցվեցին: Մի քանի տարի է, որ այդ պաշտոնի գործերով է զբաղվում: Ինչպես որ Նորին արքայական Մեծությանը զեկուցվեց հարգարժան Մուհամմադ Հուսեյն Վարմազիարը, որն այնտեղ ունեցած հողագործության և մանր եղջերավոր կենդանիների անցման համար [նախատեսված] փարախի վերաբերյալ սրբավայրի մութավալլիի թույլտվությունն ունի, անկարգություններ է անում, վնաս պատճառում և [վանքի] շահերին հակառակ վարվում: Նաև հանգուցյալ Զաման Խանի որդի բարձրաստիճան Հուսեյն Ալի Խան Քենգերլուն վիճում է վերոհիշյալի հետ այնտեղի փարախի շուրջ այն դեպքում, երբ շարիաթական կալվածագրերի կետերով վիճաբանության առարկան մտնում է նշված գյուղերի մուլքի մեջ: Այս պատճառով հրամայում ենք, որպեսզի բարձրաստիճան ու փառահեղ, մեծանուն պալատական պաշտոնյա Խոյի գավառապետի լիազոր Մուհամմադ Թահեր խանը խստորեն կարգադրի, որ նախ՝ այնտեղի թիուլը վերահաստատված ու ստորագրությամբ ամրացված համարվի, երկրորդ՝ հիշյալ Մուհամմադ Հուսեյն Բեկը առանց Օվանես խալիֆայի

շրջանում (**Lambton** 2008, 488-489), և տվյալ դեպքում այս եզրույթի կիրառումը մատնանշում էր, տվյալ վակֆային կալվածքի եկամուտների տնօրինման իրավունք և ազատում պետական հարկերից:

[42] Մալիքանե (مالكانه) - Կալվածատիրոջ կամ մալիքին վճարվող հողային ռենտա: Համանիշներ «*քահրաչի*», «*մուլք*»: Այն կազմում էր ամբողջ բերքի 1/10-ը կամ 1/5-ը:

[43] Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ Սարգիս Դավթյանից հետո Մաղարդա վանքի առաջնորդն է եղել Յովհաննէս Գալստեանը (**Ալիշան** 1893, 521):

թույլտվության իրեն [նախկինեում] տրամադրված մազրա‘են[44] ու փարախը չընմնի, մինչև որ խալիֆան ինքը, որ այդ սեփականության (մուլքի) մութավալլին է, նորից չթույլատրի, հակառակ դեպքում կպատժվի, երրորդ՝ բարձրաստիճան Հուսեյն Ալին, որ կալվածագրին չհամապատասխանող պահանջներ ունի և անօրինականություն է գործում, ոչ մի դեպքում չպետք է խալիֆային անհանգստացնի ու նեղություն պատճառի, որպեսզի սրբավայրի մութավալլին և սպասավորները հանգստություն ունենալով՝ հաղթական պետության հարատևման համար աղոթքներով զբաղվեն: Թող հրամանին համապատասխան գործադրեն և այս իրենց պարտականությունը համարեն: 1264 թ. ջումադի Ա. ամսին[45]:

[Բնագրից վեր]. Ճիշտ է:

THE MONASTERIES OF TATEV, ST. THADDEUS AND ST. STEPANNOS THE APOSTLES IN THE FIRST HALF OF THE 19TH CENTURY

K.P. Kostikyan

Summary

From the beginning of Qajar rule in Iran the Armenian monasteries of Syunik and Artaz suffered the hardships of the Russo-Persian conflict and wars for the regions of Transcaucasia. The Persian documents of the Matenadaran throw light on some political and economic developments around the monasteries and help elucidate some aspects of Qajar policy as regards the Armenian sanctuaries under their rule. Tatev monastery, located in the territory subject to the khan of Karabagh had passed under the rule of Russian empire after the treaty concluded in Kurakchay in 1805 and then after the fights of the Russo-Per-

[44] Մազրաե (مزرعه) - Հացահատիկի հող, գյուղակ, որ պատկանում է մայր գյուղին:

[45] 1848թ. ապրիլի 5-մայիսի 5

sian war of 1804 - 1813 its annexation to Russia was confirmed by the treaty of Gulistan. The monastery served as a refuge of the Russian troops fighting for the region.

The monasteries of Artaz remained under the rule of Qajar Iran after the treaty of Turkmenchay concluded in 1828, at the end of the second Russo-Persian war. The Qajar governement supported the monasteries of St. Thaddeus and St. Stepannos, the apostles, and tried to keep away its Armenian followers, the inhabitants of Azerbayjan from migration to the regions passed under the rule of Russia. In spite of these attempts the major portion of the Armenians of Azerbayjan migrated. However, the Qajar powers granted some estates to the monasteries in the villages around them and protected their rights with royal decrees and other documents in order to secure their survival in later Muslim environment.

Մատենագիտություն

Ալիշան 1893 – հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, ի Մխիթարայ վանս ի Ս. Ղազար, 1893:

Կոստիկյան 2017 – Ք. Կոստիկյան, Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումներ պարսկերեն վաւերագրերում, Հայկազյան հայագիտական հանդէս, 37, Բեյրութ, էջ 123-152:

Կոստիկյան 2021 – Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ V, Երևան, Մատենադարանի հրատ. :

Հախնազարյան 2012 - Ա. Հախնազարյան, Արտազի երեք վանքերը, Երևան, ՀՃՈՒ հրատ. :

ՀՀ Ազգային Արխիվ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 285:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, արխիվ, վավերագրեր 396, 397:

Մատենադարան Մեսրոբ Մաշտոցի անվան Հին Ձեռագրերի ինստիտուտ (ՄՄ) Կաթողիկոսական դիվան (կ/դ), թղթ. 2բ,

վավ. 129; թղթ. 4, վավ. 135-141, 143, 148, 149; թղթ. 1ե, վավ. 678, 750, 751, 752, 753, 754, 762, 763, 775, 776, 792, 794բ, 797:

Միրզա Յուսուֆ Ներսեսով 2000 - Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմ. ներած. և ծանոթ. Ք. Կոստիկյանի, Երևան, «Զանգակ-97» :

Ոսկեան 1942 - հ. Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ. Մաս, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1942:

Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարան, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 3945տ:

Փափազյան 1956, 1959 - Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., պրակ Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ. :

Փափազյան 1959 - Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ. :

Ֆրանգեան 1905 - Ե. Ֆրանգեան, Ատրպատական (պատկերազարդ ժողովածու), Թիֆլիս, Հերմես :

АКАК 1870 - Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. IV, Тифлис, изд. Тип. Главного Управления Наместника Кавказского .

АКАК 1873 - АКАК, т. V, Тифлис, изд. Тип. Главного Управления Наместника Кавказского .

АКАК 1875 - АКАК, т. VI , ч. II, Тифлис, изд. Тип. Главного Управления Наместника Кавказского .

Глинка 1831 - С. Глинка, Описание переселения армян Аддербиджанских, Москва, в тип. Лазаревых Института Восточных Языков, 1831.

Farhang-e jughrafya-ye Iran, 1330 - Farhang-e jughrafya-ye Iran, Āstān-I Azarbayjan, v. IV, Tehran, Chāpkhāna-i Artash .

Lambton 2008 – A. Lambton, Land Tenure And Revenue Administration In The Nineteenth Century, The Cambridge History of Iran, edited by P. Avery, G. Hambly, Ch. Melville, Cambridge University Press, 459-506.

Nava'i 1988 - A. Nava'i, Bahrām Mīrzā, Moʿezz-Al-Dawla, Encyclopaedia Iranica, Vol. III, 1988, Fasc. 5, p. 524, available online at http://ww w.iranicaonline.org/articles/bahram-mirza-moez z -al-dawla-the-secondson-of-the-crown-prince-abbas-mirza (accessed on July 9, 2023).

Riżāqulī Khān Hidāyat 1339 - Riżāqulī Khān Hidāyat, Tārīkh-i Raużat al-safā-yi Nāsirī, vol. X, Qum, pub. Hikmat .